



Արսեն Մանվելի Աբրահամյանը ծնվել է 1976 թվականի հոկտեմբերի 25-ին Երևան քաղաքում:

Արսեն Աբրահամյանը իր գործունեությունը ԱԿԲԱ բանկում սկսել է 1999 թվականին՝ որպես հաշվապահ: 2010 թվականին նա նշանակվել է ՄՌԿ բաժնի պետ, իսկ 2015 թվականից ղեկավարել է բանկի մարդկային ռեսուրսների կառավարման վարչությունը:

Արսեն Աբրահամյանը ստացել է տնտեսագիտության աստիճան Տնտեսագիտական ինստիտուտում, իսկ 2020 թվականին ստացել է Ռազմավարական կառավարման և առաջնորդության 7-րդ մակարդակի դիպլոմ Մեծ Բրիտանիայի Արտոնագրված Կառավարման ինստիտուտի կողմից(CMI):

2025 թվականի մարտից Արսեն Աբրահամյանը ստանձնել է Մարդկային ռեսուրսների կառավարման և կազմակերպական զարգացման տնօրենի պաշտոնը:

Ամուսնացած է, ունի 2 որդի: